Ռ. ԳՈՒՐՅԱՆ
ՓՈԽ. ՀԱՅԿ ՈՇԱԿԱՆ

С/А 39-И/81

ԴԺՎԱՐ

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

ՀԱԼԵԼՈՒԿ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

27.03.2013
3093

Մայրիկը Միշիկին մի հանելուկ առաջարկեց.

— Այն ինչն է ձմեռը տաք, իսկ ամառը պաղ լինում։

Միշիկը մտածեց — մըտածեց — չգտավ։

Գնաց իր ընկերների մոտ։

891.71Մ
Գ-90
-6 NOV 2011

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

— Այն ինչն է, — հարցրեց — ձմեռը տաք, իսկ ամառը պաղ լինում։

— Հացը ձմեռը տաք է, — ասաց Պետրոսը։

— Սկզբում տաք է լինում, իսկ հետո պաղ, պատասխանեց Միշիկը։

— Գետնի տակից դուրս յեկող ջրերն, աղբյուներն ամառը պաղ են լինում, ասաց Հրանուշը։

ՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
61975·67

— Ամառը պաղ են լինում, բայց ձմեռն այնքան էլ տաք չեն լինում, — պատասխանեց Միշիկը։

Այդպես էլ հանելուկը չհանեցին։ Միշիկը տուն գնալով ասաց.

— Այդպես հանելուկ յես չեմ կարող հանել։ Շատ կարճ է, համառոտ։ Ասա, ինչով են կերակրում նրան։

— Ինչով նրան կերակրում են — սկզբում լինում է՝

Կանաչ,

Հետո սպիտակ,

Ապա կարմիր,

Վերջն էլ սև։

Միշիկը մոածեց — մոածեց — չգտավ։ Գնաց իր ընկերների մոտ։

— Այն ի՞նչն է, — հարցրեց, — սկզբում կանաչ է լինում, հետո սպիտակ, ապա կարմիր և վերջն էլ սև։



— Խեցգետինը, — ասավ Պետրոսը։

Խեցգետինը սկզբում կանաչ է լինում, իսկ հետո կարմիր, քանի՞ ծնաց սևն ու սպիտակը։ — պատասխանեց Միշիկը։

— Այդ թուղթն է, — ասաց Հրանուշը, թուղթը սկզբում սպիտակ է, հետո յերբ նկարեմ՝ նա կլինի

և կարմիր,

և կանաչ.

և սև.

— Այդ ու՞մ մատիտն է կանաչ, իմը կապույտ է, պատասխանեց Միշիկը.



Տուն գնաց Միշիկն ու բացականչեց. — ամբողջ որը յես վազվզեցի, մայրիկ, քո այդ հանելուկի համար և մրսեցի։

— Վառարանը տաք է, — ասաց մայրը, — գնա վառարանի մոտ և տաքացիր։

Միշիկը մոտեցավ վառարանին կրկնելով.— ամբողջ որը յես վազվզեցի քո այդ հանելուկի համար և մրսեցի։



Բայց մայրիկը ծիծաղեց.

— Իմ հանելուկի մեջ քեզ համար բաղցրեղեն կա, ասաց նա և մի փայտ նետեց վառարանի մեջ։ Զոր փայտը շուտով փոխվեց կարմիր կրակի։

Այդ ժամանակ Միշիկը գլխի ընկավ։

— Այդ վառարանն է, վառարանը, վոր ձմեռը տաք է լինում, ամառը՝ պաղ, իսկ նրան կերակրում են փայտով։

Ծառը սկզբում լինում է կանաչ,

Հետո սպիտակ,

Հետո կարմիր — կրակ,

Վերջն էլ սև ածուխ.

— Իսկ ու՞ր է քաղցրեղենը։

— Ահա, — ասաց մայրը, վառարանից հանելով կարմրած — քաղցր խմորեղենը։

Ցեվ Միշիկը սկսեց վա[illegible] յելել կլոր, քաղցր խմ[illegible] ղենը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0383386
ՊԵՍ ԿԱՆ ԳՐ[illegible]
ՀՍՍ Библио[illegible]
ՀՍՍՌ-Арм.[illegible]

ԳԻՆԸ 35 ԿՊԿ.

3093

361
14 –

ՆԿԱՐՆԵՐ ՅԵ. ՖՐԱԴԿԻՆՈՅԻ ՅԵՎ
Ս. ՎԻՇԿԵՎԵՑԿՈՅԻ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

1
2

О. ГУРЯН

ТРУДНАЯ ЗАГАДКА

ГИЗ. СССР 1931 ЭРИВАНЬ

891.715
Գ-90

ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ ՊԵՏՀՐԱՏԻ ՊԱՏՎԵՐ № 372
ՊԵՏՀՐԱՏ № 1437 ՏԻՐԱԺ 4000